ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 011-59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր № 21.11.2016 310-ի 5

№ 07/25.3/9980-16
«25» 11 2016 թ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԱՆԱ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր հարցադրումների, հայտնում ենք հետևյալը.

**1. Համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ կետի, Ձեր գերատեսչությունում նշանակվե՞լ է արդյոք տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը:**

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունում տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ է հանդիսանում նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետը:

**2. Տեղադրվա՞ծ է արդյոք ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի մասին տեղեկատվությունը (հեռախոս, էլ.փոստի հասցե) գերատեսչության կայքում (եթե այո, ապա խնդրում եմ նշել հիպերհղումը):**

ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձի մասին տեղեկատվությունը (հեռախոս, էլ.փոստի հասցե) տեղադրված է նախարարության կայքում, ԿԱՊ հատվածում՝ http://mineconomy.am/arm/contacts.html:

Կատարող՝ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին Ցոլինե Ալեքսանյան
Հեռ.՝ 011 597 212

**3. Խնդրում եմ տրամադրել այն իրավական ակտի պատճենը կամ դրա հրապարակման հիպերհղումը, որով նշանակվել է ՏԱ համար պատասխանատու պաշտոնատար անձը:**

Հաշվի առնելով նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի գործառույթները, վերջինս, նախարարի բանավոր հանձնարարությամբ, իրականացնում է նախարարության ՏԱ համար պատասխանատու անձի պարտականությունները:

Հարգանքով՝ ԱՐՄԵՆ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ